ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2023 թվականի N **336**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 06-007-0037-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ 1.2422 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15 ԲԱՀՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 27.04.2006 թվականի թիվ 570-Ն որոշումը, Ստեփանավան քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը հաստատելու մասին 30.11.2006թ. թիվ 1724-Ն ՀՀ կառավարության որոշումը, ՀՀ կառավարության 06 մարտի 2018թ. թիվ 303-Ն որոշումը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծը՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. 06-007-0037-0001 ծածկագրից առանձնացված 06-007-0037-0006 ծածկագրով 1.2422 հա մակերեսով խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համաձայն ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1724-Ն որոշման փոփոխել՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Ճանաչել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 1.2422 հա հողամասի և հողամասի վրա գտնվող 729.53

քմ ներքին մակերեսով նկուղային հարկի 28.02 քմ մակերեսով աստիճանավանդակի նկատմամբ Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:

3. Հողամասի սահմանները որոշվում են «Գագիկ Մոսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
4. Վերը նշված բազմաբնակարան շենքի նկուղային հարկին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան քաղաք Գ. Նժդեհի փողոց 15 շենք 50 նկուղ:
5. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում նշված հողամասի և շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀՐԱՉՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N **337**

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԻՆԵ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարինե Բուլղադարյանի 2023 թվականի մայիսի 26-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 27.12.2022թ. թիվ 130-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Չայկովսկու փողոց թիվ 16 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Կարինե Բուլղադարյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի համար՝ 01.04.2023-30.06.2023թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Ղալաչյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման, առևտրի սպասարկման և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N **338**

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՏԱՆՅԱ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Տանյա Ավագյանի 2023 թվականի մայիսի 26-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 27.12.2022թ. թիվ 130-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Գ. Նժդեհ փողոց թիվ 21 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Տանյա Ավագյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի համար՝ 01.04.2023-30.06.2023թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Ղալաչյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման, առևտրի սպասարկման և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N **339**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 18.05.2023թ.-ի N ԱՍ/25.2/14176-2023 գրությունը, 28.03.2023թ.-ի N 509-Ա հրամանը, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության 02.05.2023թ.-ի N 91/7869 գրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 03.12.2020թ.-ի N 1994-Ն որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Լևոն Քալանթարյան	համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ-հանձնաժողովի նախագահ
Արսեն Հարությունյան	համայնքի ղեկավարի օգնական-հանձնաժողովի անդամ

Կարեն Պողոսյան	համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ- հանձնաժողովի անդամ
Սիրանուշ Մելիքսեթյան	համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան- հանձնաժողովի անդամ
Արթուր Արսենյան	ՀՀ ՏԿԵՆ ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ- հանձնաժողովի անդամ
Դավիթ Մելքոնյան	«Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների շահերի պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ- հանձնաժողովի անդամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N **340**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0006-0014 ԾԱԾԿԱԳՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 115 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորիկ Վանիկի Սաքանյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Բաղրամյան փողոց 115 բնակելի տուն հասցեում ինքնակամ կառույցված բնակելի տան մի մասի, մանսարդի, անասնագոմի մի մասի և արհեստանոցի օրինականացնելու խնդրանքը, 02.05.2005թ. N 1148505 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 02.05.2023թ. թիվ 2023GAQ2EY ծածկագրով տրամադրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և 10.03.2023թ.կազմված ինքնակամ կառույցների հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Բաղրամյան փողոց 115 բնակելի տուն հասցեի, Ժորիկ Վանիկի Սաքանյանին սեփականության իրավունքով պատկանող 06-007-0006-0014 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.08604հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 87.28 քմ ներքին մակերեսով բնակելի տան մի մասը, 91.58 քմ մանսարդը, 18.11քմ անասնագոմի բաց պատշգամբը և 0.8 քմ աստիճանավանդակը, 80.39քմ արհեստանոցը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 87.28 քմ ներքին մակերեսով բնակելի տան մի մասի համար 146020 /մեկ հարյուր քառասունվեց հազար քսան/ ՀՀ դրամ, 91.58 քմ մանսարդի համար 153214 /մեկ հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր տասնչորս / ՀՀ դրամ, 18.11քմ անասնագոմի բաց պատշգամբի և 0.8 քմ աստիճանավանդակի համար 31637 /երեսունմեկ հազար վեց հարյուր երեսունյոթ, 80.39 քմ արհեստանոցի համար 134493 /մեկ հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր ինիսուներեք/ ՀՀ դրամ: Ընդամենը վճարվելիք գումարը կազմում է 465364 /չորս հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը, վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
3. Օրինականացման համար կահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N **341**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0107-0017 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ, ՎԻՐԱՀԱՅՈՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 92/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔՈԹԵՋԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.01899 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱԶԳԵՆ ԿԻՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վազգեն Կիմի Կարապետյանի կողմից ներկայացված դիմումը, 14.11.2023թ. թիվ 1205886 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 08.05.2023թ. թիվ 2023W5AMMHF ծածկագրով տրամադրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և այն հանգամանքը, որ քոթեջի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.01899 հա հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և սեփականաշնորհված քոթեջը իրենից ներկայացնում է քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով սեփականաշնորհված սակավաբնակարան բնակելի տուն, ղեկավարվելով ՀՀ Հողայի օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 3-րդ կետի է ենթակետով, ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714-ն որոշման է կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ 1-ին մասի հոդվածի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության

18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-007-0107-0017 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, քոթեջի սպասարկման համար նախատեսված, բնակավայրերի նպատակային նշանակության 0.01899 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Վազգեն Կիմի Կարապետյանի սեփականության իրավունքը: Ճանաչել սեփականություն նաև 31.3 քմ ներքին մակերեսով նկուղի և 20.6 քմ աստիճանավանդակի նկատմամբ, որոնք կառուցվել են 1992թ., սակայն պետական գրանցում չեն ստացել: Օրինականացնել բնակելի տան 1-ին հարկում փակված երկու պատուհանը, որի համար համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին վճարել 2442 /երկու հազար չորս հարյուր քառասուներկու /ՀՀ դրամ:

   Բնակելի տան 1-ին և 2-րդ հարկերում կատարված միջնորմերի փոփոխությունները համարել օրինական, քանի որ փոփոխված պատերը չեն հանդիսանում կրող պատեր:
2. Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հողամասի սահմանները որոշվում են «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի համաձայն:
4. Հողամասում առկա է ինքնակամ կառուցված 12.92 քմ ներքին մակերեսով տնտեսական շինություն:
5. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N **342**

ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. Մ. ՍՊԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 30, ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 1/1 ԵՎ ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. Մ. ՍՊԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՆԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՍՈՃԵՆԻ» ՍՊԸ-ի տնօրեն Արսեն Հմայակի Հարությունյանի կողմից ներկայացված 26.05.2023թ. թիվ Հ-527 դիմումը, 28.08.2020թ. N 28082020-06-0026, 26.04.2022թ. N 26042022-06-0026 և 25.06.2021թ. N 25062021-06-0024 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Մ. Սպարապետի փողոց թիվ 30, մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Մխիթար Սպարապետի փողոց 1-ին փակուղի թիվ 1/1 և մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Մ. Սպարապետի փողոց 1-ին փակուղի թիվ 1 հասցեներով անշարժ գույքերի միավորման արդյունքում առաջացած՝ 0.13127 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք ք. Ստեփանավան, Մխիթար Սպարապետի փողոց, 30 տնտեսական շինություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2023 թվականի N **343**

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմեն Սաքանյանի 2023 թվականի մայիսի 29-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 27.12.2022թ. թիվ 130-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի Դեսինկի փողոց թիվ 69 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արմեն Սաքանյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի համար՝ 01.04.2023-30.06.2023թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Ղալաչյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման, առևտրի սպասարկման և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2023 թվականի N **344**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12.02.2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 24 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարուժան Կարապետի Մխոյանի կողմից 10.05.2023թ. ներկայացված թիվ Մ-472 դիմումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 12.02.2014թ. թիվ 24 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 –րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 12.02.2014 թվականի թիվ 24 որոշումը, ք. Ստեփանավան Պրոմեթևս փողոց թիվ 53/3-1 հասցեով, 20 քմ մակերեսով, 20 տարի ժամանակով կառուցապատման իրավունքով հողատարածք տրամադրելու մասին որոշումը:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման, առևտրի սպասարկման և գովազդի բաժնին՝ Վարուժան Կարապետի Մխոյանի հետ կնքված կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքի կառուցապատման իրավունքի հողօգտագործման պայմանագիրը խզել, վերջինիս կողմից իր ունեցած հարկային պարտավորությունները մարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» հունիսի 2023 թվականի N **345**

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 51-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջանիբեկ Ջիվանի Հովհաննիսյանի կողմից ներկայացված 30.05.2023թ. թիվ 535 դիմումը, 22.03.2011թ. թիվ 2500383 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, 30.05.2023թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ նոտարական ակտի կոդ 863-20230529-84-6961112, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Լոռու մարզ, ք. Ստեփանավան 51-րդ թաղամաս հասցեով, 06-007-0733-0009 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք ք. Ստեփանավան, գ. Արմանիս 13-րդ փողոց, 8 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ